Վ. Բ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ. Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (XVIII դարի կես – XX դարի սկիզբ), *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 420 էջ:*

Օտար տիրապետության հաստատման և հայրենազրկման հետևանքով ուշ-միջնադարյան Հայաստանում տնտեսական ու ազգային մշակութային կյանքի ապահովման անհնարինությունը սկզբնավորել է հայազգի բնակչության հայրենիքից արտագաղթ ու պայմանավորել գաղթավայրերի ստեղծման միջոցով ազգային գոյատևման ապահովման փորձերը:

Ակադեմիկոս Վ. Բարխուդարյանի ձևակերպմամբ, հայոց գաղթաշխարհի ընդհանուր պատմության հիմնական առանձնահատկությունը երկու հայրենիք ունենալու գաղափարի մարմնավորումն է: Բոլոր գաղութների համար ընդհանուր է եղել այն, որ նրանք լծորդել են Մայր հայրենիքը իրենց ապաստան տված երկրի, նոր հայրենիքի հետ (էջ 5): Ազգային ինքնության պահպանման համար հետևողական պայքարի մեջ էլ դրսևորվել է հայ ժողովրդի կենսունակությունը, ինչը և պայմանավորել է հեռանկարում հայրենիքում պետականության վերականգնման գաղափարը:

Հայաստանի պատմության ուսումնասիրությանը զուգահեռ հայ պատմագիտության կողմից մեծ աշխատանք է կատարվել նաև հայկական տարբեր գաղթավայրերի պատմության հետազոտման ուղղությամբ, ինչը հնարավորություն է ընձեռել 1960–80-ական թվականներին համակարգված շարադրելու «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակը: 1990-ական թվականներին շարունակված հետազոտական աշխատանքների շնորհիվ հնարավոր դարձավ 2003 թ. կազմակերպել «Հայ գաղթաշխարհի պատմություն» եռհատորյակի առաջին երկու հատորների տպագրությունը:

Վ. Բարխուդարյանը բացահայտում է այն կարևոր առանձնահատկությունը, որ ի տարբերություն այլևայլ երկրներում (Լեհաստան, Նոր Ջուղա, Հնդկաստան և այլն) հաստատված հայկական գաղթավայրերի, առաջացած լինելով նույն դարաշրջանում, նույն հանգամանքների բերումով և ունենալով նմանատիպ մի շարք արտոնություններ, դրանցից զրկվելուց հետո ևս - ռուսահայ գաղթավայրերը շարունակեցին գոյատևել:

Հայ-ռուսական փոխհարաբերությունների աստիճանական ձևավորման ողջ գործընթացում առանձնացնելով և ընդգծելով Մոսկվայի և Պետերբուրգի հայ գաղթավայրերի դերակատարման նշանակությունը, Վ. Բարխուդարյանը մենագրական հետազոտությամբ ներկայացրել է հայկական գաղթավայրերի գործունեության ամբողջական պատմությունը՝ սկսելով դրանց սկզբնավորման փուլից և հայ-ռուսական հարաբերությունների ձևավորման լայն տեսադաշտի վրա, առ այդ ավելի լիակատար ընդգրկելով աղբյուրագիտական նյութն ու ապահովելով դրանց համակողմանի քննությունը:

Աշխատության առաջին գլխում, որ նվիրված է Մոսկվայում և Պետերբուրգում հայկական գաղութների առաջացման ուսումնասիրմանը, Վ. Բարխուդարյանն ընդգծում է այն հանգամանքը, թե հայ բնակչությունը հաստատման առաջին իսկ փուլերից սկսում է հետամուտ լինել դավանական պատկանելությունն ամուր պահելու և հայկական եկեղեցիներ կառուցելու պաշտոնական թույլտվություն ստանալու հարցերին: Եկեղեցիներ ունենալու հանգամանքը համայնքային կազմակերպություն ստեղծելու նախապայմաններից էր, ինչը և հայ բնակչությանը թելադրել է հետևողական լինել խնդրի լուծման համար: Այդ ուղղությամբ Լ. Շիրվանյանի, Հ. Լազարյանի և այլոց ջանքերի շնորհիվ ար-

դեն XVIII դ. երկրորդ կեսից ստացվում է իշխանությունների թույլտվությունը՝ Մոսկվայում և Պետերբուրգում հայկական եկեղեցիներ կառուցելու վերաբերյալ և, ինչպես ընդգծում է Վ. Բարխուդարյանը, Մոսկվայի ու Պետերբուրգի «հոգևոր կյանքին հետևում, եկեղեցիների կենսունակությունը ապահովում և նրանց գործունեությունը, հիմնադրումից սկսած, տնօրինում էին Լազարյանները» (էջ 63):

Խաչատուր Լազարյանին հաջողվել է Ռուսաստանի մայրաքաղաքներում փոքրաթիվ ծխականներ ունենալու պայմաններում Պետերբուրգի և Մոսկվայի հինգ եկեղեցիների հետագա գոյության երաշխիքներ ապահովելու նպատակով կազմել նախագիծ և, ըստ այդմ, դրանք միավորել այնպես, որ հնարավոր լինի մեկի միջոցների պակասը լրացնել մյուսի հաշվին, իսկ ապա դրանց միացնել նաև Լազարյան ճեմարանը: Լազարյան ճեմարանում բացվել է հոգևորականներ պատրաստող հատուկ բաժին, և միաժամանակ եկեղեցիներն ու Լազարյան ճեմարանը պետք է ազատ լինեին պետական ու քաղաքային բոլոր հարկերից (էջ 72–73): 1871 թ. Լազարյան տոհմի վերջին ներկայացուցիչ Խ. Լազարյանի մահից հետո կրկին ծառացավ Պետերբուրգի և Մոսկվայի եկեղեցիների, դրանց շարժական ու անշարժ ունեցվածքի տնօրինման հարցը, ինչը և առիթ դարձավ համայնքային կառավարման նոր մարմնի՝ եկեղեցական խորհրդի ձևավորման համար: Ներկայացված նախագծերի հաշվառումով կառավարությունը 1883 թ. նոյեմբերի 18-ին ընդունում է որոշում, ըստ որի ստեղծվում են եկեղեցական խորհուրդներ և միաժամանակ եկեղեցական երկու խորհուրդների նախագահ է դառնում մայրաքաղաքների հայկական եկեղեցիների հոգաբարձու իշխան Ս. Աբամելեք-Լազարյանը՝ ժառանգաբար (էջ 78–80): Հարցի լուսաբանումը կարևոր է, քանզի ի տարբերություն Ռուսաստանի տարածքում ձևավորված հայկական մյուս գաղութների, որոնց ինքնավարությունը մարմնավորում էին ռաթհաուզները կամ մագիստրատները, Մոսկվայի և Պետերբուրգի պարագայում այդ դերը կատարում էր հայերին միավորող միակ ազգային կազմակերպությունը՝ հայոց եկեղեցին, որը, ի դեմս եկեղեցական խորհրդի, դարձավ համահայկական ընդգրկում ունեցող կազմակերպություն (էջ 85): Կարևոր է աշխատության հեղինակի՝ եկեղեցական խորհրդի եկամուտների ու ծախսերի վերաբերյալ ուսումնասիրությունից արված այն եզրակացությունը, որ եկեղեցական խորհուրդը ոչ միայն ամենամյա, այլ հաճախ նաև առանձին գրքույկներով ամենամյա հաշվետվություններ էր հրապարակում եկամուտների և ծախսերի վերաբերյալ, ինչը եկեղեցական խորհրդի գործունեությունը դարձնում էր առավել թափանցիկ և մեծացնում նրա նկատմամբ հասարակության վստահությունը: Ավելին, այդ հարցերի լուսաբանմանը նվիրված աշխատության երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը ամփոփող եզրակացությամբ՝ «մայրաքաղաքների համայնքների եկամուտներն օգտագործվում էին ոչ այնքան ներգաղթային պահանջները բավարարելու, որքան համազգային նպատակներով» (էջ 100):

Աշխատության երրորդ գլուխը նվիրված է հասարակական-քաղաքական և սոցիալական կյանքի ոլորտներում հայկական համայնքների դերի ուսումնասիրությանը, ինչը ներառում է Պետերբուրգի և Մոսկվայի հայ գործիչների ունեցած մասնակցությանն ու Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին նրանց բազմապիսի արձագանքներին՝ Հայաստանի ազատագրության ծրագրեր, պարսկահայերի ներգաղթի խնդիրներ, ռուս-թուրքական պատերազմներ և հայերի կոտորածները Արևմտյան Հայաստանում, հայոց եկեղեցու գույքի բռնագրավում, հայ-թաթարական ընդհարումներ, Համաշխարհային պատերազմ, ցեղասպանություն և գաղթականներին օգնության կազմակերպում և այլն (էջ 160–161):

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացված են նշված համայնքների դերը հայ-ռուսական հասարակական կապերի ոլորտում: Մոսկվան և Պետերբուրգը կարևոր դեր են ստանձնում հայ երիտասարդների բուհական կրթություն ստանալու մեջ: Դորպատից հետո Մոսկվայի ու

Պետերբուրգի համալսարանների շրջանավարտները, վերադառնալով Հայաստան, իրենց նպաստն են բերում հասարակական, մշակութային, կրթական, գրական և այլ ոլորտների զարգացմանը: Հայ ուսանողության և բուհական կրթության ավարտից հետո մայրաքաղաքներում գործող մտավորականների շնորհիվ աշխուժանում են ոչ միայն ներհամայնքային կապերը, գրական-մշակութային միջոցառումները, այլև առնչությունները ռուս մտավորականության ու մշակույթի շատ ներկայացուցիչների հետ: Միաժամանակ նրանք չեն անջրպետվում հայրենիքում բնակվող ազգակիցների հոգսերից և տարբեր առիթներով կազմակերպում են հանգանակություններ՝ օգնելու բնական տարբեր աղետների հետևանքով տուժած բնակչությանը. երկրաշարժեր՝ Ախալքալաքում, Շամախիում, Էրզրումում, հրդեհներ՝ Զեյթունում, ջրհեղեղներ՝ Ագուլիսում, երաշտներ ու սով՝ Արևմտյան Հայաստանում և այլն (էջ 195-213):

Աշխատության չորրորդ գլուխը նվիրված է նշված համայնքների մշակույթի ոլորտում գործունեության լուսաբանմանը (էջ 214-332): Մշակութային կյանքում եւակետային նշանակություն ուներ Լազարյան ճեմարանի հաստատումը Մոսկվայում և նրա դերի գնահատումը: Ի տարբերություն Լազարյան ճեմարանի վերաբերյալ նախորդ ուսումնասիրությունների՝ ներկա մենագրության մեջ առավել հստակորեն և հանգամանորեն է ներկայացված ճեմարանի հաստատման ու կայացման ողջ գործընթացը, նոր վավերագրերով հարստացված է ճեմարանի կատարած դերի և համազգային նշանակության գնահատումը: Ուշագրավ է, որ Մոսկվայի եկեղեցական խորհուրդը բավականաչափ միջոցներ տրամադրելով «լազարյան սաներ» էր պահում նաև Մայր աթոռի Գևորգյան ճեմարանում (էջ 252): Լազարյան տոհմի նախաձեռնությամբ ստեղծված եկեղեցական խորհուրդների հովանավորչական գործունեությունը տարածվում էր մինչև բուն Հայաստանի գավառներ՝ ուսումնակրթական, տպագրական և բազմապիսի այլ ծրագրերի իրականացման համար: Մեծ էր նաև Մոսկվայի ու Պետերբուրգի դերը հայ գաղթավայրերում հայագիտության զարգացման, Հայաստանում հնագիտական հետազոտությունների իրականացման, հայ մատենագրական հուշարձանների օտար լեզուների թարգմանության, թատերական արվեստի և այլնայլ ասպարեզներում:

Ամփոփելով մենագրությունը՝ Վ. Բարխուդարյանը իրավացիորեն արձանագրում է Մոսկվայի ու Պետերբուրգի հայկական գաղթավայրերի ազգային-հասարակական կյանքի կազմակերպման գործում Լազարյանների խաղացած առանցքային դերը, և միաժամանակ այդ միջոցով նրանց ունեցած համազգային անջնջելի վաստակը. «Արդի ժամանակաշրջանի հայ գործիչների համար նրանք կարող են մշտապես ժողովրդի կողքին լինելու, նրան նվիրվելու լավագույն օրինակը լինել» (էջ 337):

Աշխատությունը կարևոր է նաև Հայաստանի և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ ծավալվող կեղծարարություններին դիմակայելու առումով, որոնցում փորձեր են արվում հայ բնակչությանը ներկայացնելու որպես բնակության վայրերում սպառնալիք տեղի այլ ժողովուրդների անվտանգության համար: Ցանկալի է, որպեսզի Վ. Բարխուդարյանի սույն աշխատությունը թարգմանվի ռուսերեն, ինչը նպաստավոր կլինի Ռուսաստանում պարբերաբար հրահրվող հակահայկական հիստերիան ևս զսպելու նպատակով:

ՊԱՎԵԼ ՉՈԲԱՆՅԱՆ